# Կ Ո Ն Վ Ե Ն Ց Ի Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության կառավարությունը և Թաիլանդի Թագավորության կառավարությունը, ցանկանալով կնքել եկամուտների և գույքի կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիա, պայմանավորվեցին հետևյալի մասին.

### Հոդված 1
### ԱՆՁԻՆՔ, ՈՐՈՆՑ ՆԿԱՏՄԱՄԲ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց նկատմամբ:

### Հոդված 2
### ՀԱՐԿԵՐ, ՈՐՈՆՑ ՎՐԱ ՏԱՐԱԾՎՈՒՄ Է ԿՈՆՎԵՆՑԻԱՆ

1. Սույն Կոնվենցիան կիրառվում է Պայմանավորվող Պետության կամ տեղական իշխանության մարմինների կողմից սահմանված եկամուտների և գույքի հարկերի նկատմամբ՝ անկախ դրանց գանձման եղանակից:

2. Եկամուտների և գույքի հարկեր են համարվում ամբողջ եկամտի, ամբողջ գույքի կամ եկամտի կամ գույքի առանձին տարրերի նկատմամբ սահմանված բոլոր հարկերը, ներառյալ շարժական կամ անշարժ գույքի օտարումից առաջացած եկամտի հավելաճի, ձեռնարկությունների վճարած աշխատավարձի ընդհանուր գումարի, ինչպես նաև գույքի արժեքի հավելաճի նկատմամբ հարկերը:

3. Սույն Կոնվենցիան կիրառվում է, մասնավորապես, գոյություն ունեցող հետևյալ հարկերի նկատմամբ.

ա) Հայաստանի դեպքում՝

i) շահութահարկ

ii) եկամտահարկ, և

iii) գույքահարկ

(հետագայում՝ «հայկական հարկ»),

բ) Թաիլանդի դեպքում՝

i) եկամտահարկ, և

ii) վառելանյութից եկամտի հարկ

(հետագայում՝ «թաիլանդական հարկ»):

4. Սույն Կոնվենցիան կիրառվում է նաև նույնական կամ ըստ էության համանման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն սույն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գոյություն ունեցող հարկերի կամ դրանց փոխարեն: Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները խելամիտ ժամկետներում միմյանց կծանուցեն իրենց համապատասխան հարկային օրենքներում կատարված նշանակալի փոփոխությունների մասին:

## Հոդված 3

## ԸՆԴՀԱՆՈՒՐ ՍԱՀՄԱՆՈՒՄՆԵՐ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում.

ա) «Պայմանավորվող Պետություն» կամ «մյուս Պայմանավորվող Պետություն» տերմինները, ենթատեքստից կախված, նշանակում են Հայաստան կամ Թաիլանդ,

բ) «Հայաստան» տերմինը նշանակում է Հայաստանի Հանրապետությունը, և աշխարհագրական իմաստով օգտագործելիս նշանակում է տարածքը, ներառյալ ներքին ջրերը, որոնց նկատմամբ, իր ներքին օրենսդրության և միջազգային իրավունքի համաձայն, Հայաստանի Հանրապետությունն իրականացնում է ինքնիշխան իրավունքներ և իրավասություն,

գ) «Թաիլանդ» տերմինը նշանակում է Թաիլանդի Թագավորություն և ներառում է Թաիլանդի Թագավորության տարածքային ծովին հարող ծովամերձ տարածքը, որը, Թաիլանդի օրենսդրության և միջազգային իրավունքի համաձայն, նշանակում է կամ կարող է նշանակել տարածք, որի ծովային հատակի և նրա ստորին շերտի բնական պաշարների նկատմամբ Թաիլանդի Թագավորությունն իրականացնում է իրավունքներ,

դ) «անձ» տերմինը ներառում է՝ ֆիզիկական անձ, ընկերություն և անձանց ցանկացած այլ միավորում, ինչպես նաև յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության գործող հարկային օրենքներով որպես հարկվող միավոր համարվող ցանկացած կազմավորում,

ե) «ընկերություն» տերմինը նշանակում է՝ ցանկացած իրավաբանական անձ կամ ցանկացած այլ միավոր, որը հարկման նպատակներով դիտարկվում է որպես իրավաբանական անձ,

զ) «Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» և «մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկություն» տերմինները նշանակում են, համապատասխանաբար, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից ղեկավարվող ձեռնարկություն,

է) «հարկ» տերմինը, ենթատեքստից կախված, նշանակում է բաիլանդական հարկ կամ հայկական հարկ,

ը) «ազգային անձ» տերմինը նշանակում է.

i) Պայմանավորվող Պետության քաղաքացիություն ունեցող ցանկացած ֆիզիկական անձ,

ii) ցանկացած իրավաբանական անձ, միավորում կամ այլ միավոր, որն Պայմանավորվող Պետության գործող օրենսդրության հիման վրա ստացել է իր այդ կարգավիճակը,

թ) «միջազգային փոխադրում» տերմինը նշանակում է՝ ցանկացած փոխադրում Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից շահագործվող ծովային կամ գետային նավով, օդանավով, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցով, բացառությամբ այն դեպքերի, երբ այդպիսի փոխադրումն իրականացվում է բացառապես մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող վայրերի միջև, և

ժ) «իրավասու մարմին» տերմինը նշանակում է.

i) Հայաստանի դեպքում՝ պետական եկամուտների նախարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը,

ii) Թաիլանդի դեպքում՝ ֆինանսների նախարարը կամ նրա լիազոր ներկայացուցիչը:

2. Պայմանավորվող Պետության կողմից սույն Կոնվենցիան կիրառելիս դրանում չսահմանված ցանկացած տերմին, եթե ենթատեքստը այլ բան չի պահանջում, ունի այն նշանակությունը, որը նրան այդ Պետության օրենսդրությամբ տրված է այն հարկերի առնչությամբ, որոնց նկատմամբ կիրառվում է Կոնվենցիան:

### Հոդված 4
### ՌԵԶԻԴԵՆՏ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «Պայմանավորվող Պետության ռեզիդենտ» տերմինը նշանակում է՝ ցանկացած անձ, որը այդ Պետության օրենսդրության համաձայն, այնտեղ ենթակա է հարկման իր մշտական բնակության, ռեզիդենտության, ստեղծման վայրի, ղեկավարման վայրի կամ որևէ այլ համանման չափանիշի հիման վրա և ներառում է նաև այդ Պետությունը և ցանկացած տեղական իշխանության մարմինը: Սակայն այդ տերմինը չի ներառում որևէ անձի, որը ենթակա է հարկման այդ Պետությունում միայն այդ Պետության աղբյուրներից ստացված եկամտի կամ այնտեղ գտնվող գույքի առնչությամբ:

2. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, նրա կարգավիճակը կորոշվի հետևյալ կերպ.

ա) նա կհամարվի այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա ունի իր մշտական կացարանը, իսկ եթե նա մշտական կացարան ունի երկու Պետություններում, ապա նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի հետ նրա անձնական և տնտեսական կապերն առավել սերտ են (կենսական շահերի կենտրոն),

բ) եթե հնարավոր չէ որոշել այն Պետությունը, որտեղ նա ունի իր կենսական շահերի կենտրոնը, կամ եթե նա Պետություններից և ոչ մեկում չունի իր

մշտական կացարանը, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որտեղ նա սովորաբար բնակվում է,

գ) եթե նա սովորաբար բնակվում է երկու Պետություններում էլ կամ նրանցից և ոչ մեկում չի բնակվում, նա կհամարվի միայն այն Պետության ռեզիդենտը, որի ազգային անձն է հանդիսանում,

դ) եթե նա երկու Պետությունների ազգային անձն է հանդիսանում կամ և ոչ մեկինը չէ, Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կձգտեն հարցը լուծել փոխադարձ համաձայնությամբ:

3. Երբ 1-ին կետի դրույթներին համապատասխան ֆիզիկական անձից տարբերվող անձը հանդիսանում է երկու Պայմանավորվող Պետությունների ռեզիդենտ, ապա նա կհամարվի միայն այն Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, որտեղ այն ստեղծված է:

## Հոդված 5
## ՄՇՏԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ

1. Սույն Կոնվենցիայի նպատակներով «մշտական հաստատություն» տերմինը նշանակում է՝ գործունեության կայուն վայր, որի միջոցով ամբողջությամբ կամ մասամբ իրականացվում է ձեռնարկության ձեռնարկատիրական գործունեությունը:

2. «Մշտական հաստատություն» տերմինը հատկապես ներառում է.

ա) ղեկավարման վայր

բ) մասնաճյուղ

գ) գրասենյակ

դ) գործարան

ե) արտադրամաս

զ) հանքահոր, նավթի կամ գազի հորատանցք, քարհանք կամ բնական պաշարների արդյունահանման ցանկացած այլ վայր

է) պահեստ, որը վերաբերում է այլ անձանց՝ պահեստավորման հարմարություններ մատուցող անձին:

3. ա) Շինարարական հրապարակը, կառուցման, տեղակայման կամ հավաքման ծրագիրը կամ դրանց հետ կապված վերահսկողական

գործունեությունը, երբ այդպիսի հրապարակի, ծրագրի կամ գործունեության տևողությունը գերազանցում է 6 (վեց) ամիսը:

բ) Պայմանավորվող Պետություններից որևէ մեկի ռեզիդենտի կողմից աշխատողների կամ այլ անձնակազմի միջոցով ծառայությունների մատուցումը, ներառյալ խորհրդատվական ծառայությունները, երբ այդ բնույթի գործունեությունների տևողությունը միևնույն կամ դրա հետ կապված ծրագրի համար մյուս Պայմանավորվող Պետությունում ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում գերազանցում է 6 (վեց) ամիս ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները:

4. Չնայած սույն հոդվածի նախորդ կետերի դրույթներին՝ կհամարվի, որ «մշտական հաստատություն» տերմինը չի ներառում.

ա) հարմարությունների օգտագործումը ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

բ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես պահեստավորման կամ ցուցադրման նպատակով,

գ) ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պաշարների պահպանումը բացառապես այլ ձեռնարկության կողմից մշակման նպատակով,

դ) գործունեության կայուն վայրի օգտագործումը բացառապես ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնման կամ տեղեկությունների հավաքման նպատակով,

ե) գործունեության կայուն վայրի օգտագործումը բացառապես ձեռնարկության համար նախապատրաստական կամ օժանդակ բնույթի ցանկացած այլ գործունեություն իրականացնելու նպատակով,

զ) գործունեության կայուն վայրի օգտագործումը բացառապես «ա»-«ե» ենթակետերում նշված գործունեության տեսակների ցանկացած համակցության համար, եթե այդ համակցության արդյունքում գործունեության կայուն վայրի ամբողջական գործունեությունը նախապատրաստական կամ օժանդակ բնույթի է:

5. Չնայած 1-ին, 2-րդ և 3-րդ կետերի դրույթներին՝ եթե անկախ կարգավիճակով գործակալ համարվող անձից (որին վերաբերում է 7-րդ կետը)

տարբերվող անձը Պայմանավորվող Պետությունում գործում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության անունից, ապա այդ ձեռնարկու-թյունը համարվում է առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե այդպիսի անձը՝

ա) առաջինը հիշատակված Պետությունում ունի ու սովորաբար օգտագործում է այդ ձեռնարկության անունից պայմանագրեր կնքելու իրավասություն, եթե միայն այդ անձի գործունեությունը չի սահմանափակվում ձեռնարկության համար ապրանքների կամ արտադրանքի գնմամբ,

բ) չունի այդպիսի իրավասություն, սակայն առաջինը հիշատակված Պետությունում սովորաբար օգտագործում է ձեռնարկությանը պատկանող ապրանքների կամ արտադրանքի պահեստ, որտեղից նա ձեռնարկության անունից կանոնավորապես պատվերներ է կատարում կամ իրականացնում է առաքումներ, կամ

գ) չունի այդպիսի իրավասություն, սակայն առաջինը հիշատակված Պետությունում ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ պատվերներ է ապահովում ձեռնարկության համար կամ ձեռնարկության ու այլ այնպիսի ձեռնարկությունների համար, որոնք վերահսկվում են այդ ձեռնարկության կողմից կամ այդ ձեռնարկությունում ունեն վերահսկման շահեր:

6. Անկախ սույն հոդվածի նախորդ դրույթներից՝ Պայմանավորվող Պետության ապահովագրական ընկերությունը, բացառությամբ վերաապահովագրման դեպքերի, համարվում է մյուս Պետությունում մշտական հաստատություն ունեցող, եթե այն այդ մյուս Պետության տարածքում իր ծառայողի կամ անկախ կարգավիճակով գործակալ հանդիսացող անձից (որին վերաբերում է 7-րդ կետը) տարբերվող ներկայացուցչի միջոցով ընդունում է ապահովագրավճարներ կամ ապահովագրում է այնտեղ տեղակայված ռիսկերից:

7. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը չի համարվում մյուս Պայմանավորվող Պետությունում մշտական հաստատություն ունեցող միայն այն պատճառով, որ այդ մյուս Պետությունում գործունեություն է իրականացնում բրոքերի, գլխավոր կոմիսիոն գործակալի կամ անկախ կարգավիճակ ունեցող ցանկացած գործակալի միջոցով՝ պայմանով, որ այդպիսի անձինք գործում են իրենց սովորական գործունեության շրջանակներում: Սակայն սույն կետի իմաստով այդ անձը չի դիտարկվի որպես անկախ կարգավիճակով գործակալ,

եթե այդպիսի գործակալի գործունեությունը ամբողջությամբ կամ գրեթե ամբողջությամբ իրականացվում է այդ ձեռնարկության անունից կամ այդ ձեռնարկության ու այլ այնպիսի ձեռնարկությունների անունից, որոնք վերահսկվում են այդ ձեռնարկության կողմից կամ այդ ձեռնարկությունում ունեն վերահսկման շահեր:

8. Այն փաստը, որ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերությունը վերահսկում է մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ ընկերությանը կամ վերահսկվում է նրա կողմից կամ ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում այդ մյուս Պետությունում (մշտական հաստատության միջոցով կամ այլ կերպ), ինքնին որևէ ընկերության չի դարձնում մյուս ընկերության մշտական հաստատությունը:

## Հոդված 6
## ԵԿԱՄՈՒՏ ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԻՑ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից ստացված եկամուտը (ներառյալ գյուղատնտեսությունից կամ անտառային տնտեսությունից եկամուտը) կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. «Անշարժ գույք» տերմինն ունի այն նշանակությունը, որը նրան տրված է այն Պայմանավորվող Պետության օրենսդրությամբ, որտեղ գտնվում է դիտարկվող գույքը: Այդ տերմինը ամեն դեպքում ներառում է անշարժ գույքին օժանդակ գույքը, գյուղատնտեսությունում և անտառային տնտեսությունում օգտագործվող անասունն ու սարքավորումները, այն իրավունքները, որոնց նկատմամբ կիրառվում են հողային սեփականությանը վերաբերող ընդհանուր օրենսդրության դրույթները, անշարժ գույքի ուզուֆրուկտը և օգտակար հանածոների հանքատեղերի, հանքավայրերի և այլ բնական պաշարների շահագործման կամ շահագործման իրավունքի դիմաց փոխհատուցման համար փոփոխական կամ հաստատուն վճարումների իրավունքները: Ծովային, գետային նավերը, օդանավերը, ճանապարհային և երկաթուղային փոխադրամիջոցները որպես անշարժ գույք չեն դիտարկվում:

3. 1-ին կետի դրույթները կիրառվում են անշարժ գույքի ուղղակի օգտագործումից, վարձակալությամբ տրամադրելուց կամ ցանկացած այլ ձևով օգտագործելուց ստացված եկամուտների նկատմամբ:

4. 1-ին և 3-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև ձեռնարկության անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ և անկախ անձնական ծառայություններ մատուցելու համար օգտագործված անշարժ գույքից ստացված եկամուտների նկատմամբ:

## Հոդված 7
## ՇԱՀՈՒՅԹ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԻՑ

1. Պայմանավորվող Պետության ձեռնարկության շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, եթե այդ ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով այնտեղ չի իրականացնում ձեռնարկատիրական գործունեություն: Եթե ձեռնարկությունը վերը նշված ձևով իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, ապա ձեռնարկության շահույթը կարող է հարկվել մյուս Պետությունում, բայց միայն այն չափով, որը վերագրելի է այդ մշտական հաստատությանը:

2. Հաշվի առնելով 3-րդ կետի դրույթները, երբ Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության միջոցով այնտեղ իրականացնում է ձեռնարկատիրական գործունեություն, յուրաքանչյուր Պայմանավորվող Պետությունում այդ մշտական հաստատությանը վերագրվում է այն շահույթը, որն այն կարող էր ստանալ նույն կամ համանման պայմաններում իրականացնելով նույն կամ համանման գործունեությունը՝ լինելով ինքնուրույն և առանձին ձեռնարկություն և գործելով միանգամայն անկախ այն ձեռնարկությունից, որի մշտական հաստատությունն է հանդիսանում:

3. Մշտական հաստատության շահույթը որոշելիս թույլատրվում է նվազեցում համարել մշտական հաստատության գործունեության նպատակների համար կրած ծախսերը, ներառյալ կառավարչական և ընդհանուր վարչական ծախսերը, ինչպես այն Պետությունում, որտեղ գտնվում է այդ մշտական հաստատությունը, այնպես էլ այլ վայրերում:

4. Եթե Պայմանավորվող Պետությունում ընդունված է մշտական հաստատությանը վերագրվող շահույթը որոշել ձեռնարկության կամ մշտական հաստատության համախառն եկամտի որոշակի տոկոսի հիման վրա կամ ձեռնարկության ամբողջ շահույթն իր տարբեր ստորաբաժանումների միջև համամասնական բաշխման հիման վրա, 2-րդ կետի ոչ մի դրույթ որևէ կերպ այդ Պայմանավորվող Պետությանը չի արգելի հարկման ենթակա շահույթը որոշել ընդունված եղանակի միջոցով: Այնուամենայնիվ, ընդունված եղանակը պետք է լինի այնպիսին, որ արդյունքը համապատասխանի սույն հոդվածում ընդգրկված սկզբունքներին:

5. Ոչ մի շահույթ չի վերագրվի մշտական հաստատությանը այդ մշտական հաստատության կողմից ձեռնարկության համար բացառապես ապրանքներ կամ արտադրանք գնվելու պատճառով:

6. Նախորդ կետերի նպատակներով մշտական հաստատությանը վերագրվող շահույթը միևնույն եղանակով որոշվում է ամեն տարվա համար, եթե հակառակն անելու համար չկա հիմնավոր և բավարար պատճառ:

7. Երբ շահույթը ներառում է եկամտի այնպիսի տարրեր, որոնց մասին առանձին նշվում է սույն Կոնվենցիայի այլ հոդվածներում, ապա սույն հոդվածի դրույթները չեն ազդում այդ հոդվածների դրույթների վրա:

## Հոդված 8

## ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ՓՈԽԱԴՐՈՒՄ

1. Միջազգային փոխադրումներում օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության ստացած շահույթը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող Պետությունում:

2. Միջազգային փոխադրումներում ծովային կամ գետային նավերի շահագործումից Պայմանավորվող Պետության ձեռնարկության ստացած շահույթը կարող է հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, սակայն մյուս Պետությունում գանձված հարկը պետք է նվազեցվի դրա 50 տոկոսին համարժեք գումարի չափով:

3. 1-ին և 2-րդ կետերի դրույթները կիրառվում են նաև միավորումում, համատեղ ձեռնարկությունում կամ միջազգային շահագործող գործակալությունում մասնակցությունից առաջացած շահույթի նկատմամբ:

## Հոդված 9
## ՓՈԽԿԱՊԱԿՑՎԱԾ ՁԵՌՆԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Երբ՝

ա) Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում է մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում, կամ

բ) միևնույն անձինք ուղղակիորեն կամ անուղղակիորեն մասնակցում են Պայմանավորվող Պետության ձեռնարկության և մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկության ղեկավարմանը, վերահսկմանը կամ կապիտալում,

և յուրաքանչյուր դեպքում երկու ձեռնարկությունների միջև նրանց առևտրական կամ ֆինանսական փոխհարաբերություններում ստեղծված կամ սահմանված են պայմաններ, որոնք տարբերվում են նրանցից, որոնք կստեղծվեին երկու անկախ ձեռնարկությունների միջև, ապա ցանկացած շահույթ, որը կհաշվեգրվեր նրանցից մեկին, բայց այդ պայմանների պատճառով չի հաշվեգրվել, կարող է ներառվել այդ ձեռնարկության շահույթի մեջ և, համապատասխանաբար, հարկվել:

2. Երբ Պայմանավորվող Պետությունը այդ Պետության ձեռնարկության շահույթի մեջ ներառում և, համապատասխանաբար, հարկում է այն շահույթը, որի առնչությամբ մյուս Պայմանավորվող Պետության ձեռնարկությունը ենթարկվել է հարկման այդ մյուս Պետությունում, և այդ ձևով ներառված շահույթն այն շահույթն է, որը հաշվեգրված կլիներ առաջինը հիշատակված Պետության ձեռնարկությանը, եթե երկու ձեռնարկությունների միջև լինեին անկախ ձեռնարկություններին բնորոշ փոխհարաբերություններ, ապա այդ մյուս Պետությունը կատարում է այդ շահույթի առնչությամբ այնտեղ գանձված հարկի գումարի համապատասխան ճշգրտում այդ մյուս Պետության հարկային օրենսդրությանը համապատասխան: Այդպիսի ճշգրտումը որոշելիս հաշվի են

առնվում սույն Կոնվենցիայի այլ դրույթները, իսկ Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները անհրաժեշտության դեպքում կարող են խորհրդակցել միմյանց հետ:

## Հոդված 10
## ՇԱՀԱԲԱԺԻՆՆԵՐ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարված շահաբաժինները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի շահաբաժինները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժինները վճարող ընկերությունը՝ այդ Պետության օրենքներին համաձայն, բայց այդ ձևով գանձված հարկը չպետք է գերազանցի շահաբաժինների համախառն գումարի 10 (տասը) տոկոսը, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ է:

Սույն կետը չի ազդում ընկերության հարկմանը այն շահույթի նկատմամբ, որից վճարվում են շահաբաժինները:

3. «Շահաբաժիններ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ եկամուտ բաժնետոմսերից, հանքարդյունաբերության բաժնետոմսերից, հիմնադիրների բաժնետոմսերից կամ այլ, պարտապահանջ չհանդիսացող, շահույթին մասնակցելու իրավունք տվող այլ իրավունքներից, ինչպես նաև եկամուտ այլ բաժնետիրական իրավունքներից, որը ենթակա է նույնպիսի հարկային կարգավորման, ինչպիսին բաժնետոմսերից առաջացած եկամուտը՝ համաձայն այն Պետության օրենսդրության, որի ռեզիդենտն է հանդիսանում բաշխումն իրականացնող ընկերությունը:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե շահաբաժինների փաստացի սեփականատերը, հանդիսանալով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում շահաբաժիններ վճարող ընկերությունը՝ այնտեղ գտնվող մշտական

հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և մասնակցությունը, որի համար վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են սույն Կոնվենցիայի 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերությունը եկամուտ կամ շահույթ է ստանում մյուս Պայմանավորվող Պետությունում, այդ մյուս Պետությունը ընկերության կողմից վճարված շահաբաժինները չի կարող ենթարկել որևէ հարկման, բացառությամբ, երբ այդպիսի շահաբաժինները վճարվում են այդ մյուս Պետության ռեզիդենտին, կամ երբ մասնակցությունը, որի հետ կապված վճարվում են շահաբաժինները, իրականում կապված է այդ մյուս Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ, և չի կարող հարկման ենթարկել ընկերության չբաշխված շահույթը համապատասխան հարկատեսակով, եթե անգամ վճարված շահաբաժինները կամ չբաշխված շահույթը ամբողջությամբ կամ մասամբ կազմված են այդ մյուս Պետությունում առաջացող շահույթից կամ եկամտից: Սույն կետում ոչինչ չի մեկնաբանվի որպես Պայմանավորվող Պետության կողմից այդ Պետության օրենքների համաձայն այնտեղ գտնվող մշտական հաստատության ստացած շահույթների տնօրինումը եկամտային հարկման ենթարկելը կանխարգելող դրույթ:

## Հոդված 11
## ՏՈԿՈՍՆԵՐ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող տոկոսները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի տոկոսները կարող են հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են՝ այդ Պայմանավորվող Պետության օրենքներին համաձայն, բայց, եթե ստացողը տոկոսների փաստացի սեփականատերն է, այդ ձևով գանձվող հարկը չպետք է գերազանցի տոկոսների համախառն գումարի 10 (տասը) տոկոսը՝ այն դեպքում, երբ տոկոսները ստացվում են մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից, որը

ա) Հայաստանի ռեզիդենտի դեպքում՝ բանկային գործունեություն իրականացնելու լիցենզիա ունեցող ցանկացած հաստատություն է,
բ) Թաիլանդի ռեզիդենտի դեպքում՝ ցանկացած ֆինանսական հաստատություն է (ներառյալ ապահովագրական ընկերությունը):

3. Չնայած սույն հոդվածի 2-րդ կետի դրույթներին՝ Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության կառավարությանը, այնտեղ ստեղծված իշխանության մարմիններին, այդ մյուս Պայմանավորվող Պետության կենտրոնական բանկին կամ Թաիլանդի արտահանման-ներմուծման բանկին վճարվող տոկոսները պետք է ազատվեն հարկումից առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում:

4. «Տոկոսներ» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ ցանկացած տեսակի պարտապահանջներից եկամուտը՝ անկախ հիպոթեքային ապահովումից և անկախ պարտապանի շահույթին մասնակցության իրավունքի առկայությունից, մասնավորապես, կառավարական արժեթղթերից եկամուտը և պարտատոմսերից կամ փոխառության տոմսերից եկամուտը, ներառյալ այդպիսի արժեթղթերի, պարտատոմսերի և փոխառության տոմսերի հետ կապված պարգևավճարներն ու մրցանակները, ինչպես նաև այն եկամուտը, որը Պայմանավորվող Պետության, որտեղ առաջանում է եկամուտը, հարկման օրենքներով հավասարեցված է փոխ տված դրամից ստացված եկամտին:

5. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե տոկոսների փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում են տոկոսները՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և պարտապահանջը, որի առնչությամբ վճարվում են տոկոսները, գործնականորեն կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

6. Տոկոսները համարվում են առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքը Պետությունն է, այդ Պետության տեղական իշխանությունը կամ ռեզիդենտը: Սակայն, երբ տոկոսներ վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից,

Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է պարտքը, որի տոկոսները վճարվում են, և այդ տոկոսների վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդ տոկոսները համարվում են առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

7. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով պարտապահանջին վերաբերող վճարվող տոկոսների գումարը գերազանցում է այն գումարին, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը մնում է հարկման ենթակա յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

## Հոդված 12
## ՌՈՅԱԼԹԻ

1. Պայմանավորվող Պետությունում առաջացող և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարվող ռոյալթին կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Սակայն այդպիսի ռոյալթին կարող է հարկվել նաև այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ այն առաջանում է՝ այդ Պետության օրենքներին համապատասխան, սակայն եթե ստացողը ռոյալթիի փաստացի սեփականատերն է և մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտն է, ապա գանձվող հարկը չպետք է գերազանցի ռոյալթիի համախառն գումարի 15 (տասնհինգ) տոկոսը:

3. «Ռոյալթի» տերմինը սույն հոդվածում օգտագործելիս նշանակում է՝ փոխհատուցման ձևով ստացած ցանկացած տեսակի վճարում գրական, արվեստաբանական կամ գիտական աշխատանքների, ներառյալ կինոնկարների կամ ռադիո կամ հեռուստատեսային հեռարձակման համար օգտագործվող ֆիլմերի կամ ձայներիզների, ցանկացած պատենտի,

ապրանքային նշանի, նախագծի կամ մոդելի, գծագրի, գաղտնի բանաձևի կամ գործընթացի ցանկացած հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական սարքավորումների հեղինակային իրավունքի օգտագործման կամ օգտագործման իրավունքի համար, կամ արդյունաբերական, առևտրային կամ գիտական փորձին վերաբերող տեղեկության համար:

4. 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում, եթե ռոյալթիի փաստացի սեփականատերը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտ, ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում, որտեղ առաջանում է ռոյալթին՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այդ մյուս Պետությունում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և իրավունքը կամ գույքը, որոնց առնչությամբ վճարվում է ռոյալթին, իրականում կապված է այդպիսի մշտական հաստատության կամ հաստատուն բազայի հետ: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

5. Ռոյալթին համարվում է առաջացած Պայմանավորվող Պետությունում, եթե վճարողն ինքը այդ Պետությունն է, այդ Պետության տեղական իշխանության մարմինը կամ ռեզիդենտը: Սակայն, երբ ռոյալթին վճարող անձը, անկախ Պայմանավորվող Պետության ռեզիդենտ լինելու կամ չլինելու հանգամանքից, Պայմանավորվող Պետությունում ունի մշտական հաստատություն կամ հաստատուն բազա, որոնց առնչությամբ առաջացել է ռոյալթի վճարելու պարտավորությունը, և այդպիսի ռոյալթիի վճարման ծախսերը կրում է այդպիսի մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան, ապա այդպիսի ռոյալթին համարվում է առաջացած այն Պետությունում, որտեղ գտնվում է մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

6. Երբ վճարողի և փաստացի սեփականատիրոջ կամ նրանց երկուսի և որևէ այլ անձի միջև հատուկ հարաբերությունների պատճառով օգտագործման, իրավունքի կամ տեղեկության համար վճարվող ռոյալթիի գումարը գերազանցում է այն գումարը, որը կհամաձայնեցվեր վճարողի և փաստացի սեփականատիրոջ միջև նման հարաբերությունների բացակայության դեպքում, ապա սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն վերջինը հիշատակված գումարի նկատմամբ: Այդ դեպքում վճարումների ավելցուկային մասը ենթակա է

հարկման յուրաքանչյուր Պայմանավորվող Պետության օրենքներին համապատասխան՝ հաշվի առնելով սույն Կոնվենցիայի այլ դրույթները:

## Հոդված 13
## ԳՈՒՅՔԻ ԱՐԺԵՔԻ ՀԱՎԵԼԱՃ

1. 6–րդ հոդվածում նշված և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքի օտարումից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած արժեքի հավելաճը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ունեցած հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, ներառյալ այդպիսի մշտական հաստատության (առանձին կամ ամբողջ ձեռնարկության հետ մեկտեղ) կամ այդպիսի հաստատուն բազայի օտարումից առաջացած արժեքի հավելաճը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների կամ այդպիսի ծովային կամ գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը վերաբերող շարժական գույքի օտարումից ստացված արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այդ Պայմանավորվող Պետությունում:

4. Սույն հոդվածի 1-ին, 2-րդ և 3-րդ կետերում հիշատակված գույքից տարբերվող ցանկացած այլ գույքի օտարումից առաջացած արժեքի հավելաճը ենթակա է հարկման միայն այն Պայմանավորվող Պետությունում, որի ռեզիդենտն է հանդիսանում օտարող անձը: Սույն կետում ոչինչ չի խոչընդոտում Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրին հարկելու բաժնետոմսերի կամ այլ արժեթղթերի վաճառքից կամ փոխանցումից ստացված արժեքի հավելաճը կամ եկամուտը:

## Հոդված 14

## ԱՆԿԱԽ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Մասնագիտական ծառայություններից կամ անկախ բնույթի այլ գործունեությունից Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում, բացառությամբ հետևյալ դեպքերի, երբ նման եկամուտը կարող է հարկվել նաև մյուս Պայմանավորվող Պետությունում.

ա) եթե նա իր գործունեությունը իրականացնելու նպատակով մյուս Պայմանավորվող Պետությունում իր տրամադրության տակ ունի հաստատուն բազա: Այդ դեպքում այդ մյուս Պետությունում կարող է հարկվել միայն այդ հաստատուն բազային վերագրվող եկամտի մասը, կամ

բ) եթե ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում մյուս Պայմանավորվող Պետությունում նրա ներկայության ժամանակահատվածը կամ ժամանակահատվածները կազմում կամ գերազանցում են ընդհանուր առմամբ 183 (հարյուր ութսուներեք) օրը: Այդ դեպքում մյուս Պետությունում կարող է հարկվել միայն այդ Պետությունում իրականացված գործունեությունից ստացված եկամտի մասը, կամ

գ) եթե մյուս Պայմանավորվող Պետությունում իր գործունեության համար վարձատրությունը վճարվում է այդ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կամ այդ Պայմանավորվող Պետությունում գտնվող մշտական հաստատության կամ հաստատուն բազայի կողմից: Այդ դեպքում վարձատրությունը կարող է հարկվել միայն այդ մյուս Պետությունում առաջացած մասով:

2. «Մասնագիտական ծառայություններ» տերմինը ներառում է հատկապես անկախ գիտական, գրական, արվեստաբանական, կրթական կամ ուսուցչական գործունեությունը, ինչպես նաև բժիշկների, ատամնաբույժների, իրավաբանների, ճարտարագետների, ճարտարապետների և հաշվապահների անկախ գործունեությունը:

## Հոդված 15
## ԿԱԽՅԱԼ ԱՆՁՆԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1. Հաշվի առնելով 16-րդ, 18-րդ և 19-րդ հոդվածների դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից վարձու աշխատանքի դիմաց ստացված աշխատավարձը և համանման այլ վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում, եթե այդպիսի վարձու աշխատանքը չի իրականացվում մյուս Պայմանավորվող Պետությունում: Եթե վարձու աշխատանքը իրականացվում է այդ կերպ, ապա դրա հետ կապված վարձատրությունը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Չնայած 1-ն կետի դրույթներին՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի կողմից մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացված վարձատրությունը ենթակա է հարկման միայն առաջինը հիշատակված Պետությունում, եթե՝

ա) ստացողը ցանկացած տասներկուամսյա ժամանակահատվածում մյուս Պետությունում գտնվում է ընդհանուր առմամբ 183 (հարյուր ութսուներեք) օրը չգերազանցող ժամանակահատվածում կամ ժամանակահատվածներում, և

բ) վարձատրությունը վճարվում է մյուս Պետության ռեզիդենտ չհանդիսացող գործատուի կողմից կամ նրա անունից, և

գ) վարձատրության ծախսերը չի կրում մյուս Պետությունում գործատուի ունեցած մշտական հաստատությունը կամ հաստատուն բազան:

3. Չնայած սույն հոդվածի նախորդ դրույթներին՝ միջազգային փոխադրումներում շահագործվող ծովային կամ գետային նավերի, օդանավի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների վրա իրականացվող վարձու աշխատանքի դիմաց ստացած վարձատրությունը ենթակա է հարկման միայն այդ Պետությունում:

## Հոդված 16
## ՏՆՕՐԵՆՆԵՐԻ ՀՈՆՈՐԱՐՆԵՐ

Որպես մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացող ընկերության տնօրենների խորհրդի անդամ՝ Պայմանավորվող Պետության

ռեզիդենտի կողմից ստացված տնօրենների հոնորարները և այլ համանման վճարումները կարող են հարկվել այդ մյուս Պետությունում:

Հոդված 17

ԱՐՏԻՍՏՆԵՐ ԵՎ ՄԱՐԶԻԿՆԵՐ

1. Չնայած 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին՝ մյուս Պայմանավորվող Պետությունում իրականացրած անձնական գործունեությունից որպես արվեստի գործիչ, ինչպիսին է թատրոնի, կինոյի, ռադիոյի կամ հեռուստատեսության արտիստը կամ երաժիշտը, կամ որպես մարզիկ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Երբ արվեստի գործչի կամ մարզիկի՝ որպես այդպիսին իրականացրած անձնական գործունեության հետ կապված եկամուտը հաշվեգրվում է ոչ թե անձամբ արվեստի գործչին կամ մարզիկին, այլ մեկ ուրիշ անձի, ապա այդ եկամուտը, չնայած սույն Կոնվենցիայի 7-րդ, 14-րդ և 15-րդ հոդվածների դրույթներին, կարող է հարկվել այն Պայմանավորվող Պետությունում, որտեղ իրականացվում է արվեստի գործչի կամ մարզիկի գործունեությունը:

3. Սույն հոդվածի 1-ին և 2-րդ կետերի դրույթները չեն կիրառվում մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության արվեստի գործչի կամ մարզիկի կամ ձեռնարկության կողմից իրականացվող գործունեությունից ստացված եկամտի նկատմամբ, եթե այդ Պայմանավորվող Պետություն այցը կամ գործունեություն իրականացնող ձեռնարկությունը, հանգամանքներից կախված, հիմնականում ֆինանսավորվում է մյուս Պայմանավորվող Պետության՝ ներառյալ տեղական իշխանության մարմինների կամ օրենքով սահմանված մարմինների, հանրային միջոցների հաշվին:

Հոդված 18

ԿԵՆՍԱԹՈՇԱԿՆԵՐ

1. Հաշվի առնելով 19-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին անցյալում վարձու աշխատանքի առնչությամբ

վճարված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. Չնայած 1-ին կետի դրույթներին՝ Պայմանավորվող պետության ռեզիդենտի կողմից ստացված կենսաթոշակները և այլ համանման վարձատրությունները կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե այդպիսի վճարումները կատարվում են այդ մյուս Պետության ձեռնարկության կամ այնտեղ տեղակայված մշտական հաստատության կողմից:

## Հոդված 19
## ՊԵՏԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ

1. ա) Պայմանավորվող Պետության կամ տեղական իշխանության մարմինների կողմից ֆիզիկական անձին այդ Պետությանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարված՝ կենսաթոշակից տարբերվող վարձատրությունները կարող են հարկվել միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի վարձատրությունները ենթակա են հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ծառայությունները մատուցվում են այդ մյուս Պետությունում, և այդ Պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը.

i) հանդիսանում է այդ Պետության ազգային անձ, կամ

ii) չի դարձել այդ Պետության ռեզիդենտը բացառապես ծառայություններ մատուցելու նպատակով:

2. ա) Պայմանավորվող Պետության կամ տեղական իշխանության մարմինների կողմից կամ նրանց կողմից ստեղծված հիմնադրամներից ֆիզիկական անձին՝ այդ Պետությանը կամ ստորաբաժանմանը կամ իշխանությանը մատուցած ծառայությունների դիմաց վճարված որևէ կենսաթոշակ կարող է հարկվել միայն այդ Պետությունում:

բ) Սակայն այդպիսի կենսաթոշակը ենթակա է հարկման միայն մյուս Պայմանավորվող Պետությունում, եթե ֆիզիկական անձը հանդիսանում է այդ Պետության ռեզիդենտն ու ազգային անձը:

3. 15-րդ, 16-րդ և 18-րդ հոդվածների դրույթները կիրառվում են Պայմանավորվող Պետության կամ տեղական իշխանության մարմինների կողմից իրականացվող ձեռնարկատիրական գործունեության հետ կապված ծառայությունների դիմաց վարձատրությունների և կենսաթոշակների նկատմամբ:

## Հոդված 20
## ՈՒՍԱՆՈՂՆԵՐ

1. Մինչև Պայմանավորվող Պետություն ժամանելուն անմիջապես նախորդող պահը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացած կամ այդ պետության ռեզիդենտ հանդիսացող և առաջինը հիշատակված Պետությունում բացառապես ուսանելու կամ կրթություն ստանալու նպատակով գտնվող ուսանողի, աշակերտի կամ փորձնակի կողմից ստացվող այն վճարումները, որոնք նախատեսված են ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու համար, այդ Պետությունում չեն հարկվում, եթե այդպիսի վճարումները առաջանում են այդ Պետությունից դուրս գտնվող աղբյուրներից:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում մատուցած ծառայությունների դիմաց ուսանողին, աշակերտին կամ փորձնակին վճարված վարձատրությունը, կախված հանգամանքներից, այդ Պետությունում չի հարկվի 5 տարի ժամանակահատվածում, եթե այդպիսի ծառայությունների մատուցումը կապված է նրա ապրելու, ուսանելու կամ մասնագիտանալու հետ:

## Հոդված 21
## ՊՐՈՖԵՍՈՐՆԵՐ, ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐ ԵՎ ՀԵՏԱԶՈՏՈՂՆԵՐ

1. Մինչև Պայմանավորվող Պետություն ժամանելուն անմիջապես նախորդող պահը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտ հանդիսացած կամ այդ պետության ռեզիդենտ հանդիսացող ֆիզիկական անձը, որը առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում է գտնվում վերջինիս իրավասու

մարմինների կողմից ճանաչվող ցանկացած համալսարանի, քոլեջի, դպրոցի կամ այլ համանման ուսումնական հաստատության հրավերով, բացառապես այդպիսի ուսումնական հաստատությունում դասավանդման կամ հետազոտման կամ երկուսի նպատակով առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունում ազատվում է հարկումից այդ Պետությունում այդպիսի դասավանդման կամ հետազոտումների համար ստացած վարձատրությունների գծով՝ իր պարտականությունների ստանձման ժամկետից 2 տարին չգերազանցող ժամանակահատվածի համար:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում հետազոտություններից ստացած եկամուտների նկատմամբ, եթե այդպիսի հետազոտությունները ֆիզիկական անձի կողմից հիմնականում անց են կացվել որոշակի անձի կամ անձանց մասնավոր շահերի համար:

## Հոդված 22
## ԱՅԼ ԵԿԱՄՈՒՏ

1. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չքննարկված եկամտի տարրերը, անկախ առաջացման վայրից, ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

2. 1-ին կետի դրույթները չեն կիրառվում 6-րդ հոդվածի 2-րդ կետում սահմանված անշարժ գույքի եկամտից տարբերվող եկամտի նկատմամբ, եթե այդպիսի եկամուտ ստացողը, լինելով Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ձեռնարկատիրական գործունեություն է իրականացնում մյուս Պայմանավորվող Պետությունում՝ այնտեղ գտնվող մշտական հաստատության միջոցով, կամ անկախ անձնական ծառայություններ է մատուցում այնտեղ գտնվող հաստատուն բազայի միջոցով, և եկամուտը իրականում վերագրելի է այդպիսի մշտական հաստատությանը կամ հաստատուն բազային: Այդ դեպքում, հանգամանքներից կախված, կիրառվում են 7-րդ հոդվածի կամ 14-րդ հոդվածի դրույթները:

3. Անկախ 1-ին և 2-րդ կետերի դրույթներից՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտի՝ սույն Կոնվենցիայի նախորդ հոդվածներում չհիշատակված և մյուս Պայմանավորվող Պետությունում առաջացած եկամտի տեսակները կարող են հարկվել նաև մյուս Պետությունում:

## Հոդված 23
## ԳՈՒՅՔ

1. 6-րդ հոդվածում նշված անշարժ գույքի տեսքով ներկայացված՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող և մյուս Պայմանավորվող Պետությունում գտնվող գույքը կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության ձեռնարկատիրական գույքի մաս կազմող շարժական գույքի կամ մյուս Պայմանավորվող Պետությունում անկախ անձնական ծառայությունների մատուցման նպատակով Պայմանավորվող Պետության ռեզիդենտի հաստատուն բազային վերաբերող շարժական գույքի տեսքով ներկայացված գույքը, կարող է հարկվել այդ մյուս Պետությունում:

3. Միջազգային փոխադրումներում շահագործվող՝ Պայմանավորվող Պետության ռեզիդենտին պատկանող ծովային, գետային նավերով, օդանավերով, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցներով կամ այդպիսի ծովային, գետային նավերի, օդանավերի, ճանապարհային կամ երկաթուղային փոխադրամիջոցների շահագործմանը շարժական գույքով ներկայացված գույքը հարկվում է միայն այդ Պետությունում:

4. Այնպիսի ընկերության բաժնետոմսերով կամ այլ կորպորատիվ իրավունքներով ներկայացված գույքը, որի ակտիվները գլխավորապես կազմված են Պայմանավորվող Պետությունում գտնվող անշարժ գույքից, կարող է հարկվել այդ Պետությունում:

5. Պայմանավորվող Պետության ռեզիդենտի գույքի բոլոր այլ տարրերը ենթակա են հարկման միայն այդ Պետությունում:

## Հոդված 24
## ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՄԱՆ ԲԱՑԱՌՈՒՄ

1.Պայմանավորվող Պետությունում կրկնակի հարկումը բացառվում է հետևյալ կերպ.

ա) երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտը ստանում է եկամուտներ կամ տնօրինում է գույք, որոնք, սույն Կոնվենցիայի դրույթներին

համապատասխան, կարող են հարկվել մյուս Պայմանավորվող Պետությունում, ապա առաջինը հիշատակված Պայմանավորվող Պետությունը թույլատրում է.

i) այդ ռեզիդենտի եկամտի հարկի նվազեցում մյուս Պայմանավորվող Պետությունում վճարված եկամտի հարկին հավասար գումարի չափով,

ii) այդ ռեզիդենտի գույքի հարկի նվազեցում՝ մյուս Պայմանավորվող Պետությունում վճարված գույքի հարկին հավասար գումարի չափով:

Սակայն երկու դեպքում էլ այդպիսի նվազեցումը չպետք է գերազանցի մինչև նվազեցման իրականացումը հաշվարկված եկամտի հարկի կամ գույքի հարկի այն մասը, որը, հանգամանքներից կախված, վերագրվում է եկամտին կամ գույքին, որոնք կարող են հարկվել այդ մյուս Պայմանավորվող Պետությունում:

բ) Երբ, սույն Կոնվենցիայի ցանկացած դրույթի համաձայն, Պայմանավորվող Պետության ռեզիդենտի ստացած եկամուտը կամ նրան պատկանող գույքը այդ Պետությունում ազատված է հարկումից, այդ Պետությունը, այնուամենայնիվ, կարող է այդպիսի ռեզիդենտի եկամտի կամ գույքի մնացած մասի համար հարկի գումարը հաշվարկելիս հաշվի առնել ազատված եկամուտը կամ գույքը:

2. Երբ, Պայմանավորվող Պետության օրենքին համապատասխան, այդ Պետությունում տրամադրվում է սույն Կոնվենցիայով ընդգրկվող հարկերից ազատում կամ նվազեցում, ապա, Կոնվենցիայի դրույթներին համապատասխան, վճարման ենթակա, սակայն այդ ազատման կամ նվազեցման պատճառով չվճարված հարկը համարվում է վճարված 1-ին կետի նպատակներից ելնելով:

## Հոդված 25
## ԱՆԽՏՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Պայմանավորվող Պետության ազգային անձինք չեն ենթարկվում մյուս Պայմանավորվող Պետությունում այլ կամ ավելի ծանր հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան, միևնույն հանգամանքների դեպքում, հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունները, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել այդ մյուս Պետության ազգային անձինք:

2. Մյուս Պայմանավորվող Պետությունում Պայմանավորվող Պետության ձեռնարկության ունեցած մշտական հաստատության հարկումը այդ մյուս Պետությունում չպետք է լինի նվազ բարենպաստ, քան այդ մյուս Պետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկության հարկումը:

3. Պայմանավորվող Պետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն պատկանում կամ կառավարվում է մյուս Պայմանավորվող Պետության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, չեն ենթարկվի առաջինը հիշատակված Պետությունում այլ կամ ավելի ծանր որևէ հարկման կամ դրա հետ կապված որևէ պարտավորության, քան հարկումը կամ դրա հետ կապված պարտավորությունները, որին ենթարկվում են կամ կարող են ենթակվել առաջինը հիշատակված Պետության այլ համանման ձեռնարկությունները:

4. Սույն հոդվածի դրույթները չեն մեկնաբանվում որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտներին որևէ նվազեցումներ և զեղչեր, անհատական հարկային արտոնություններ շնորհելու նրանց քաղաքացիական կարգավիճակի կամ ընտանեկան հանգամանքների հիման վրա, որոնք այդ Պետությունը շնորհում է իր սեփական ռեզիդենտներին:

5. Բացառությամբ այն դեպքերի, երբ կիրառվում են 9-րդ հոդվածի 1-ին կետի, 11-րդ հոդվածի 7-րդ կետի կամ 12-րդ հոդվածի 6-րդ կետի դրույթները՝ Պայմանավորվող Պետության ձեռնարկության կողմից մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին վճարած տոկոսները, ռոյալթին և այլ վարձատրությունները այդպիսի ձեռնարկության հարկվող շահույթի որոշման նպատակով ենթակա են նվազեցման նույն պայմաններով, ինչպես առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին վճարելիս: Նմանապես Պայմանավորվող Պետության ձեռնարկության ցանկացած պարտքը մյուս Պայմանավորվող Պետության ռեզիդենտին այդ ձեռնարկության հարկվող կապիտալի որոշման նպատակով ենթակա է նվազեցման նույն պայմաններով, ինչպես որ առաջինը հիշատակված Պետության ռեզիդենտին պարտք լինելիս:

6. Սույն հոդվածի դրույթները կիրառվում են միայն սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող հարկերի նկատմամբ:

## Հոդված 26
## ՓՈԽՀԱՄԱՁԱՅՆԵՑՄԱՆ ԱՐԱՐՈՂԱԿԱՐԳ

1. Այն դեպքում, երբ Պայմանավորվող Պետության ռեզիդենտը գտնում է, որ Պայմանավորվող Պետություններից մեկի կամ երկուսի գործողությունները հանգեցնում են կամ կհանգեցնեն նրա՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկման, ապա նա կարող է, այդ Պետությունների ներքին օրենսդրությամբ նախատեսված պաշտպանության միջոցներից անկախ, ներկայացնել իր գործն այն Պայմանավորվող Պետության իրավասու մարմնին, որի ռեզիդենտն է հանդիսանում: Այդպիսի գործը պետք է ներկայացվի երեք տարվա ընթացքում՝ սույն Կոնվենցիայի դրույթներին չհամապատասխանող հարկման հանգեցնող գործողության մասին առաջին ծանուցման պահից:

2. Եթե իրավասու մարմինը դիմում-բողոքը համարում է արդարացի, և եթե նա ի վիճակի չէ հանգելու գոհացուցիչ լուծման, ապա նա ձգտում է խնդիրը լուծել մյուս Պայմանավորվող Պետության իրավասու մարմնի հետ փոխհամաձայնությամբ՝ սույն Կոնվենցիային չհամապատասխանող հարկումը բացառելու նպատակով:

3. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները Կոնվենցիայի մեկնաբանման կամ կիրառման ընթացքում առաջացող ցանկացած դժվարություն կամ կասկած ձգտում են լուծել փոխհամաձայնությամբ: Նրանք կարող են նաև խորհրդակցել միմյանց հետ Կոնվենցիայով չնախատեսված դեպքերում կրկնակի հարկումը բացառելու վերաբերյալ:

4. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կարող են ուղղակի կապ հաստատել միմյանց հետ նախորդ կետերի առնչությամբ համաձայնության հասնելու նպատակով:

## Հոդված 27
## ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՓՈԽԱՆԱԿՈՒՄ

1. Պայմանավորվող Պետությունների իրավասու մարմինները կփոխանակեն այնպիսի տեղեկություններ, որոնք անհրաժեշտ կլինեն սույն Կոնվենցիայի կամ Կոնվենցիայում ընգրկված հարկերի վերաբերյալ Պայմանավորվող Պետությունների ներքին օրենսդրության դրույթների կիրառման համար՝

այնքանով, որքանով դրանցից առաջացած հարկումը չի հակասում սույն Կոնվենցիային: Պայմանավորվող Պետության կողմից ստացված ցանկացած տեղեկություն համարվում է գաղտնի, ինչպես այդ Պետության ներքին օրենսդրության սահմաններում ստացված տեղեկությունը, հայտնվում է միայն այն անձանց կամ մարմինների (ներառյալ դատարանները և վարչական մարմինները), որոնք զբաղվում են Կոնվենցիայում ընդգրկված հարկերի գնահատմամբ կամ գանձմամբ, հարկերի առնչությամբ հարկադիր բռնագանձմամբ կամ դատական հետապնդմամբ կամ հարկերի վերաբերյալ բողոքարկումների քննարկմամբ: Այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկությունները օգտագործում են միմիայն այդպիսի նպատակների համար: Նրանք կարող են հրապարակել տեղեկությունները բաց դատական նիստի ընթացքում կամ դատական որոշումների ժամանակ:

2. 1-ին կետի դրույթները ոչ մի դեպքում չեն կարող մեկնաբանվել որպես Պայմանավորվող Պետությանը պարտավորեցնող՝

ա) իրականացնելու այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքներին կամ վարչական գործավարությանը հակասող վարչական միջոցառումներ,

բ) ներկայացնելու տեղեկություն, որը հասանելի չէ այդ կամ մյուս Պայմանավորվող Պետության օրենքների կամ սովորական վարչական գործավարության ընթացքում,

գ) ներկայացնելու տեղեկություն, որը կբացահայտի որևէ առևտրական, աշխատանքային, արդյունաբերական, ձեռնարկատիրական կամ մասնագիտական գաղտնիք կամ առևտրական գործընթաց կամ՝ տեղեկություն, որի բացահայտումը կհակասի պետական քաղաքականությանը (հասարակարգին):

### Հոդված 28
### ԴԻՎԱՆԱԳԻՏԱԿԱՆ ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑՉՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՀՅՈՒՊԱՏՈՍԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ ԱՆԴԱՄՆԵՐ

Սույն Կոնվենցիայի ոչ մի դրույթ չի ազդում դիվանագիտական ներկայացուցչությունների և հյուպատոսական հիմնարկների անդամներին

միջազգային իրավունքի ընդհանուր կանոնների կամ հատուկ համաձայնագրերի դրույթների շրջանակներում տրամադրված ֆիսկալ արտոնություններից:

## Հոդված 29
## ՈՒԺԻ ՄԵՋ ՄՏՆԵԼԸ

1. Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը կծանուցի մյուսին սույն Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու համար իր օրենքների համաձայն անհրաժեշտ ընթացակարգերի ավարտի մասին: Կոնվենցիան ուժի մեջ կմտնի այդ ծանուցագրերից վերջինի ստացման օրվանից, և նրա դրույթները կգործեն՝

ա) Հայաստանի դեպքում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

ii) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարման ենթակա հարկերի նկատմամբ,

բ) Թաիլանդի դեպքում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ ստացված գումարների նկատմամբ,

ii) այլ հարկերի առնչությամբ՝ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուն հաջորդող տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարիների կամ հաշվապահական հաշվառման ժամանակաշրջանների նկատմամբ:

## Հոդված 30
## ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԴԱԴԱՐԵՑՈՒՄԸ

Սույն Կոնվենցիան ուժի մեջ կմնա անորոշ ժամանակով, ընդ որում Պայմանավորվող Պետություններից յուրաքանչյուրը ուժի մեջ մտնելու տարվանից հինգ տարի անց, ցանկացած օրացուցային տարվա մինչև հունիսի 30-ը ներառյալ, կարող է դիվանագիտական ուղիներով մյուս Պայմանավորվող Պետությանը փոխանցել դադարեցման մասին գրավոր ծանուցագիր:

Այդ դեպքում Կոնվենցիան կդադարեցնի իր գործողությունը՝

ա) Հայաստանի դեպքում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո ստացված եկամուտների նկատմամբ,

ii) եկամուտների և գույքի այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող օրացուցային տարվա հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարման ենթակա հարկերի նկատմամբ,

բ) Թաիլանդի դեպքում՝

i) աղբյուրի մոտ գանձվող հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո վճարված կամ ստացված գումարների նկատմամբ,

ii) այլ հարկերի առնչությամբ՝ ծանուցագիրը փոխանցելու տարվան հաջորդող հունվարի մեկին կամ հունվարի մեկից հետո սկսվող հարկային տարիների կամ հաշվապահական հաշվառման ժամանակաշրջանների նկատմամբ:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալներս ստորագրեցինք սույն Կոնվենցիան:

Կատարվել է ք. ---Բանգկոկում--- քրիստոնեական դարաշրջանի ---2001--- թվականի ---սեպտեմբերի 7--- ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թաիլանդերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են, բացառությամբ մեկնաբանման ժամանակ տարաձայնության առաջացման դեպքի, երբ կգերակայի անգլերեն տեքստը:

| | |
|---|---|
| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝ | ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝ |
| Լ. Բաղդասարյան | S. Sathirathai |

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հայաստանի Հանրապետության կառավարության և Թաիլանդի Թագավորության կառավարության միջև եկամուտների և գույքի հարկերի առնչությամբ կրկնակի հարկումը բացառելու և հարկումից խուսափելը կանխելու մասին Կոնվենցիան ստորագրելու պահին ներքոստորագրյալները պայմանավորվեցին, որ հետևյալ դրույթները կազմում են Կոնվենցիայի անբաժանելի մասը՝

Սույն Կոնվենցիայի 7-րդ, 8-րդ և 9-րդ հոդվածների առնչությամբ «շահույթ» տերմինն իր մեջ ներառում է նաև եկամուտը:

Ի ՎԿԱՅՈՒԹՅՈՒՆ ՈՐԻ՝ համապատասխան ձևով լիազորված ներքոստորագրյալներս ստորագրեցինք սույն Կոնվենցիան:

Կատարվել է ք. Բանգկոկում քրիստոնեական դարաշրջանի 2001 թվականի Նոյեմբերի « 7 »ին՝ երկու բնօրինակով, յուրաքանչյուրը՝ հայերեն, թաիլանդերեն և անգլերեն, բոլոր տեքստերը հավասարազոր են, բացառությամբ մեկնաբանման ժամանակ ցանկացած տարաձայնության առաջացման դեպքի, երբ կգերակայի անգլերեն տեքստը:

| ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝ | ԹԱԻԼԱՆԴԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՆՈՒՆԻՑ՝ |
| --- | --- |
| [signature] | S. Sathirathai |
| ԱԳ Նախարարի տեղակալ | Թաիլանդի ԱԳ նախարար |
| Ռ. Շուգարյան | Դր. Սուրակիարտ Սատիրատայ |